բակի դուռը: Այստեղ կանգնած էին երկու սեւամորթ ստրուկները, որոնք փաշայի ախոռատան ծառաներիցն էին: Նրանք եւս ստացան Ասլանից մի-մի ոսկի եւ, մինչեւ գետին խոնարհոելով, մի քանի անգամ գլուխ տոին:

Ինձ այնքան չէր զարմացնում փաշայի գեղեցիկ նոէրը, որքան այն միտքը, թէ որտեղի՞ց եւ ի՞նչ գումարից Ասլանը առատօրէն շաղ էր տալիս այդ ոսկիները: Երբ վերադարձանք մեր սենեակը, ես նրան հեգնօրէն նկատեցի:

— Փաշայի ընծան շատ էժան չնստեց:

— Ընդհակառակն, բաւական էժան նստեց, — պատասխանեց նա ծիծաղելով:

Յետոյ նա բացատրեց, թէ արեւելքում ընծաները, լինէին նրանք սուլթանից, շահից կամ նրանց բարձր պաշտօնակալներից, մի տեսակ արդիւնքի աղբիւրներ են: Օրինակ, թագաւորը սովորաբար տարին մի անգամ խալաթներ է ուղարկում իր նահանգապետներին կամ զանազան նշանաւոր աստիճանաւորներին: Այդ խալաթները լինում են՝ կա՛մ մի վերարկու, կա՛մ մուշտակ, կա՛մ թանկագին շաներ եւ կա՛մ այլ հագուստներ: Նրանք աւելի բարձր նշանակութիւն ունեն, երբ առնոած են արքայական անձից, այսինքն՝ երբ թագաւորը նրանց մի անգամ հագել էր: Խալաթները բերում են թագաւորի արքունիքի սպասաւորները, ըստ մեծի մասին նրա սենեկապետները: Նահանգապետը իր բոլոր աստիճանաւորներով եւ քաղաքացիների խառն բազմութեամբ ընդառաջ է գնում ընդունելու արքայական ընծան: Եւ որովհետեւ այդ տեսակ ընծաներ ստացւում են համարեա ամէն տարի, այդ պատճառով նահանգական մեծ քաղաքների մօտ, մի քանի մղոն հեռաւորութեամբ, դէպի մայրաքաղաքը տանող ճանապարհի վրայ, շինոած են առանձին պալատներ, որ կոչւում են խալաթ-փուշան, որ նշանակում է խալաթ հագնելու տեղ: Այդ պալատների մէջն է կատարւում ընդունելութեան մեծ հանդէսը. բոլոր բազմութիւնը լիանում է անուշահոտ շերբեթներով եւ քաղցրաւենիքով: Յետոյ նահանգապետը հագնում է խալաթը եւ, բազմութեան առջեւն ընկած, մտնում է քաղաքը: Ամէն կողմից ողջունում են նրան, ամէն կողմից օրհնում են ողորմած թագաւորին: Բերողը ստանում է նահանգապետից մեծ գումար, եւ այդ գումարը ծանրանում է գիւղացիների վրայ, որպէս մի բացառիկ, արտակարգ յարկ, որ կոչւում է խալաթ-փուլի, այսինքն խալաթի փող:

— Տեսնո՞ւմ ես, — աւելացրեց նա, — թագաւորը իր հին հագուստները ուղարկում է նահանգապետներին, նահանգապէաները փառք են վայելում, իսկ ծախքերը խեղճ գիւղացին է տուժում...